



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2018 թ.

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի

«Հետք» թերթի լրագրող Գրիշա Բալասանյանին

ք.Երևան, Փ.Բյուզանդի 1/3

E-mail (grisha.balasanyan@hetq.am)

Ձեր 09.07.2018թ. գրությանը

Հարգելի պարոն Բալասանյան

Ձեզ եմ տրամադրում պահանջվող տեղեկատվությունը ըստ կետերի.

1. ՀՀ Լոռու մարզում առկա է 6 չգազաֆիկացված համայնք և գազաֆիկացված 9 համայնքների կազմում կան թվով 29 չգազաֆիկացված բնակավայրեր (ցանկը կցվում է):
2. 2018թ-ին համայնքների գազաֆիկացման ծրագրեր նախատեսված չեն:
3. Համայնքների չգազաֆիկացված լինելու հիմնական պատճառներն են.
 - ֆինանսական խնդիրներ
 - Համայնքներում առկա տնտեսությունների քիչ քանակ և այդ տնտեսությունների գազաֆիկացման համար պահանջվող մեծ արժեքներ / 1 բաժանորդի համար մոտ` 1.5 մլն դրամ և ավելի/
 - Սողանքավտանգ տարածք

2018թ-ի սկզբին ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ Լոռու մարզի գազի մատակարարման 2019-2021 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտը, որտեղ ներառված են վերը նշված չգազաֆիկացված համայնքների մի մասը:

Առաջնահերթությունը տրվել է այն համայնքներին,

- որոնց գազաֆիկացումից հետո գազատարը կմոտենա հարակից մյուս չգազաֆիկացված համայնքին և բնակավայրերին,

- որոնք սահմանամերձ են
- որոնք ունեն համեմատաբար շատ բնակչություն և համայնքի գազաֆիկացումից հետո բնակչությունը պատրաստ է դառնալ գազասպառող:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Հարգանքով՝

 Invalid signature

X 

Հ.ՄԱՐԳԱՐՅԱՆ